ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4194-Ա « 28 » օգոստոսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ ՍԱՐԻ ԹԱՂ 1-ԻՆ ՓՈՂՈՑ Հ.46/4 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՉԱԳԱՆ ՆՈՐԱՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վաչագան Նորայրի Խաչատրյանի (ծնված 18.04.1973թ.) դիմումը (07.11.2023թ.):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 12.03.2025թ. հ.ԱՏ-12032025-01-1102 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 25.08.2025թ. հ.Հ-196 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.08.2026թ. հ.20-Ել-Դ-75257 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Էրեբունի Սարի Թաղ 1-ին փողոց հ.46/4 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել ք.Երևան Էրեբունի Սարի Թաղ 1-ին փողոց հ.46/4 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վաչագան Նորայրի Խաչատրյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 270.4քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 270.4քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Էրեբունի Սարի Թաղ 1-ին փողոց հ.46/4 հասցեում գտնվող 270.4քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Երևան, Էրեբունի Որմնադիրների փողոց հ.51 բնակելի տանը տրամադրել «Էրեբունի Սարի Թաղ 1-ին փողոց հ.46/4» հասցեն:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ